



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 31 Օգոստոս, 2020

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

# ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.  
 Բու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:  
 Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ:  
 Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքէս չ'ելլեր:  
 Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,  
 գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:  
 Ուստի արդար ես, ինչ վնիռ ալ արձակես.  
 Իրաւացի ես, ինչ պատիժ ալ սահմանես:  
 Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,  
 լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:  
 Յնձուքիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,  
 եւ տառապած ոսկորներս պիտի ցնծան:  
 Նկատի մի՛ առնեք մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:  
 Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,  
 նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:  
 Ներկայութենէդ մի՛ գրկեր զիս, Տէր, եւ Բու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:  
 Փրկութեանդ ցնձութիւնը տուր ինձի, եւ Բու կամփիդ հնազանդ հոգի դիր իմ մէջս:  
 Որպէսզի անօրէններուն սորվեցնեմ Բու կամփդ, եւ մեղաւորները քեզի դառնան:

## ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեւոյ արքայութիւն:  
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեւոյ:  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ Բու հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ Բու արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



## ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԸ

### ԳԼՈՒԽ 5

#### ԳՈՒԹԻ ԽՆԴՐԱՆՔ

Երեմիա մարգարեն իր ողբի վերջին բաժնով գութի ու ներումի խնդրանք կը ներկայացնէ առ Աստուած, ինքզինք նոյնացնելով, եւ իբրեւ մաս եւ բաժին նկատելով իր ժողովուրդին: Ինչպէս առիթով մը ըսուած էր, թէ մարգարէները, եւ այս պարագային Երեմիա մարգարեն իբրեւ Աստուծոյ խօսնակը, Աստուծոյ ներկայացուցիչը, Անոր պատգամները փոխանցողը այնպիսին չէ, որպէս կրաւորական, այլ ինք եւս փառապող, ցաւող, մտախոգուող, իր ժողովուրդին ցաւը նաեւ իրը նկատող, իր ժողովուրդին մեղքը իրը համարող, եւ այդպէս կը ներկայանայ Աստուծոյ: Երեմիա մարգարեն, այնպէս ինչպէս միւս մարգարէները, ինքզինք երբեք չի նկատեր որպէս մաքուրը, առանց մեղքի, ընդհակառակը, ինք եւս որպէս մէկ անդամը այդ ժողովուրդին ինք եւս ինքզինք մեղաւոր կը ներակայացնէ եւ Աստուծոյ գութն ու ողորմութիւնը կը խնդրէ:

Առաջին իսկ առիթով կը խնդրէ, որ Տէրը նայի իրենց կրած նախապիւնքին: Այս պարագային, Տէրը ինք գիտէ անոնց կրած նախապիւնքը, բայց մարգարէին արտայայտութիւնը այն է, որ Տէրը նկատի ունենայ, այսինքն՝ չանտեսէ: Ան կը սկսի ներկայացնել, թէ ինչպէս իրենց ժառանգութիւնը օտարներուն անցաւ: Ժառանգութիւն ըսելով նկատի ունի այն երկիրը որ Տէրը խոստացաւ իրենց փառքի, եւ ահա այդ երկիրը կործանեցաւ, քարուքանդ: Հայր չունեցող որբի պէս եղան: Հերաքրքրական արտայայտութիւն մը, որ կը նշանակէ, իրենց Հայրը Աստուած էր, եւ հիմա իրենք անօգնական, առանց Հօր, որովհետեւ անոնք իրենց անօրէնութեան պատճառով Աստուած լքեց զիրենք: Մէկ առ մէկ կը նշէ այն բոլոր դժուարութիւնները: Տակաւին, օգնութեան համար ալ Եգիպտոս եւ Ասորեստան ձեռք երկարեցին:

Մեղութեան եւ դժուարին այս պայմաններուն մէջ զիրենք ազատող չկայ: Ժողովուրդի բոլոր խաւի մարդիկ անցան այս կացութենէն, ըլլան անոնք, կիներ, կոյսեր, իշխաններ, ծերեր, երիտասարդներ: Իրենց սրբի ուրախութիւնը դադրեցաւ, եւ սուգի վերածուեցաւ: Այս բոլորի պատճառը, յարակօրէն մարգարէն կ'ըսէ. «Որովհետեւ մեղք գործեցինք» 16 հմբ: Մեղքի պատճառով անոնց սրբերը նուաժեցաւ, աչքերը խաւարեցան:

Ուստի, մարգարէն, նախ կը խոստովանի որ Տէրը ինք յաւիտեան է, Անոր թագաւորութիւնը դարձ դար, բայց կը խնդրէ, որ յաւիտեան չմոռնայ զիրենք, երկար ժամանակ չթողու զիրենք, այլ Իրեն դառնան, թող որ նորոգէ զիրենք, եւ առաջուան պէս ըլլան գալիք օրերը: Երեմիա մարգարէն կ'անդրադառնայ, որ որ Տիրոջ բարկութիւնը խիստ եղաւ:

Սիրելիներ, Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Ուստի համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրատը, գիտնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՛յ գաւակ մը որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ: Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ յանդիմանէ, ինչպէս կ'ընէ իր բոլոր որդիներուն, կը նշանակէ՝ թէ իր գաւակները չէք եւ խորթ էք իրեն: Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն, կը դադրի՞նք զիրենք յարգելէ: Ոչ: Ուրեմն որքան աւելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու Հօրը, որպէսզի կեանք ունենանք: Երկրաւոր հայրերը մեզ կը խրատեն միայն կարճ ժամանակ մը, իրենց ըիջո դասած ձեռով, մինչ Աստուած կը խրատէ մեր բարիքին համար, որպէսզի հաղորդակից դառնանք իր սրբութեան: Ծիշո՞ք է որ ոեւէ յանդիմանութիւն նոյն պահուն չուրախացներ, այլ կը փրփմեցնէ, բայց յետո՞յ՝ անով կրթուածներուն արդար կեանքի մը խաղաղութիւնը կը պարգեւէ» Եբր 12:7-11: